

ՄԱՆՐԷԱԶԵՐԾՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԹՐԹՈՒՌՆԵՐԻ ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԸ ԱՅՐՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐՔԵՐԻ ՎՐԱ, ԹՐԹՈՒՌՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Է.Վ.

Երևանի Մխիթար Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական
ֆակուլտետի ռազմադաշտային վիրաբուժության ամբիոն, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 10/21/2014թ., ընդունված է՝ 09/18/2014թ.

Մանրէազերծված բժշկական թրթուռների կիրառումը ներկայումս հանդիսանում է թարախամեռուկային վերքերի բուժման արդյունավետ եղանակներից մեկը: Կալիֆորա (*Caliphora*) ընտանիքի *Lուցիլիա սերիկատա* (*L. sericata*) տեսակի ճանճից լաբորատոր պայմաններում ստացվող բժշկական թրթուռների զարգացման կենսաբանական առանձնահատկությունն ապահովում է մեռուկային վերքի ընտրողական և արագ ֆերմենտային մաքրում՝ անկենսունակ հյուսվածքներից, առանց վնասելու ստորադիր առողջ հյուսվածքները խթանում է վերքի ռեգեներացիան: Կլինիկական դիտարկումների և լաբորատոր հետազոտությունների տվյալները վկայում են նաև բժշկական թրթուռների հակամանրէային ազդեցության առկայության մասին, սակայն հակամանրէային ազդեցության սպեկտրը դեռևս բավարար ուսումնասիրված չէ:

Բժշկագիտության զարգացման համար խոստումնալից ուղղություն է հանդիսանում մանրէազերծված բժշկական թրթուռների կիրառումը խորը այրվածքային վերքերի բուժման, մասնավորապես՝ արդյունավետ կերպով դերմոպլաստիկայի նախապատրաստման նպատակով:

Իրականացված հետազոտությունը նպատակ է հետապնդել ուսումնասիրել մանրէազերծված բժշկական թրթուռների ազդեցությունը խորը այրվածքային վերքերի մեռուկային հյուսվածքներից մաքրման ընթացքի և այրվածքային միկրոֆլորայի վրա: Հետազոտության մեջ ընդգրկվել է մարմնի մակերեսի 15%-ը չգերազանցող խորը այրվածքային վերքերով 73 հիվանդ: Այրվածքային վերքի բուժումը դասական եղանակով իրականացված հիվանդներն ընդգրկվել են ստուգիչ Ա խմբում, իսկ այն հիվանդները, որոնց վերքերում կիրառվել են բժշկական թրթուռներ՝ փորձնական Բ խմբում: Վերքի մանրէային աղտոտման որակական և քանակական գնահատման նպատակով իրականացվել է վերքային մակերևութից պարբերաբար վերցված քսուկների բակտերիոլոգիական քննություն: Համաձայն հետազոտության տվյալների, բժշկական թրթուռների կիրառման շնորհիվ հնարավոր է եղել Բ խմբում խորը այրվածքային վերքերը նշանակալիորեն արագ մաքրել մեռուկային հյուսվածքներից ($M=14 \pm 2.8$ օր), քան Ա խմբում, որտեղ կիրառվել է դասական բուժում ($M=21 \pm 4.9$ օր) ($p=0.0007$ Ստյուդենթի թեսթ): Փորձնական Բ խմբում բժշկական թրթուռների կիրառման շնորհիվ հնարավոր է եղել վերքերի 43% -ում նվազեցնել մանրէային աղտոտումը և ընդամենը 3 վերքում ունենալ թարախային բարդություն: Մինչդեռ ստուգիչ Ա խմբում մանրէային աղտոտումը հնարավոր է եղել նվազեցնել վերքերի 16% -ում, իսկ 9 վերքում դիտվել է թարախային բարդություն: Ստուգիչ Ա խմբում կիրառված բուժումից հետո դիտվել է ախտածին սնկերով վերքերի գաղութացման դեպքեր, իսկ այրվածքային վերքերի հիմնական հարուցիչների (*S.aureus*, *Ps aeruginosa*) հայտնաբերման հաճախությունը գրեթե չի նվազել: Փորձնական Բ խմբում բժշկական թրթուռների կիրառումից հետո նշանակալիորեն նվազել է «*S.aureus*», «*Strep. pyogenes*», «*E coli*» հարուցիչների հայտնաբերման հաճախականությունը, իսկ «*Ps aeruginosa*» և «*Proteus mirabilis*» հարուցիչները ռեգիստրացիոն են եղել թրթուռների ազդեցության հանդեպ: Ստացված տվյալները վկայում են, որ բժշկական թրթուռները հանդիսանում են մեռուկային հյուսվածքներից խորը այրվածքային վերքերը մաքրելու արդյունավետ եղանակ և այրվածքային վերքի հարուցիչների մեծամասնության հանդեպ օժտված են ընտրողական հակամանրէային ազդեցությամբ: Հաշվի առնելով գրականության տվյալները, որ բժշկական թրթուռների մարտողական արտազատումն ունի հակաբիոտիկների ազդեցությունը պոտենցելու հատկություն, այրվածքային վերքերն արդյունավետ կերպով դերմոպլաստիկայի նախապատրաստելու նպատակով բժշկական թրթուռների և հակաբիոտիկների համատեղ կիրառումը շատ դեպքերում առավել նպատակահարմար է: